

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էկսի ՍՊԸ-ն ՄՄԱՌԿ-ԷԱՃԱՊԶԲ-2026/21 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	ԷԿՍԻ	ԷԿՍԻ	ԷԿՍԻ	ԷԿՍԻ ՍՊԸ	Նախատեսված են համազգեստային/ծառայողական օգտագործման համար: Մատակարարվող արտադրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային արտադրության և համապատասխանի գործող նորմատիվ իրավական և տեխնիկական պահանջներին: Կոշիկի վերին մասը պետք է պատրաստված լինի բնական երեսնամշակված կաշվից՝ սև գույնի, 1.3-1.5 մմ հաստությամբ: Կաշին պետք է ապահովի օդաթափանցություն և ձևի

					կայունություն շահագործման ընթացքում, իսկ հաստությունը պետք է պահպանված լինի ամբողջ մակերեսով՝ տեխնոլոգիական թույլատրելի շեղումների սահմաններում: Քթամասը պետք է լինի փակ կառուցվածքի և պարտադիր ունենա ամրացնող միջադիր՝ մեխանիկական ազդեցությունների նկատմամբ դիմադրություն ապահովելու նպատակով: Քթամասը և կրունկային հատվածը պետք է համալրված լինեն կրկնակի պաշտպանիչ նյութով (գրանիտոր), որը տեղադրված է արտաքին շերտի տակ և ապահովում է լրացուցիչ ամրություն, ձևի կայունություն, մեխանիկական ազդեցությունների նկատմամբ դիմադրություն և կառուցվածքային պաշտպանություն շահագործման ընթացքում: Կրունկային հատվածում պետք է նախատեսված լինի կոշտացնող ներդիր՝ կրունկի ֆիքսման և ձևի պահպանման նպատակով: Ներքին երեսպատումը պետք է պատրաստված լինի շնչող տեքստիլ նյութից կամ բնական կաշվից (ըստ
--	--	--	--	--	--

					մոդելի): Ներքին ներբանը պետք է ունենա հիգիենիկ հատկություններ, ապահովի խոնավության կլանում և օդափոխություն, լինի անատոմիական ձևավորմամբ և համապատասխանեցված ոտքի բնական դիրքին: Ներբանը կարող է լինել շարժական, սակայն պետք է ապահովի կայուն տեղադրում շահագործման ընթացքում: Արտաքին ներբանը պետք է պատրաստված լինի մաշակայուն և հակասայթաքող նյութից: Ներբանի հաստությունը պետք է կազմի քթամասում՝ 0.8-1.2 սմ, կրունկային հատվածում՝ 1.5-1.6 սմ, իսկ կրունկի բարձրությունը՝ 2.0-2.2 սմ: Ներբանի կառուցվածքը պետք է ապահովի կայուն հպում տարբեր մակերեսների վրա և նվազեցնի սայթաքման ռիսկը: Կոշիկը պետք է լինի ճտքավոր կառուցվածքի, ամրացման համակարգը՝ կապերով: Կարի և միացման հատվածները պետք է իրականացված լինեն արտադրական տեխնոլոգիական պահանջներին համապատասխան՝ ապահովելով ամրություն և երկարակեցություն: Արտադրանքը
--	--	--	--	--	---

					պետք է ապահովի միասնական արտաքին տեսք և պահպանել ձևը շահագործման ընթացքում: Կոշիկների չափսերը պետք է լինեն 37-ից մինչև 47 ներառյալ: Չափսերի կոնկրետ բաշխումը և քանակները սահմանվում են Պատվիրատուի կողմից՝ ըստ ներկայացվող պատվերի, և մատակարարը պարտավոր է ապահովել պահանջվող չափսերի ամբողջական և ճշգրիտ մատակարարումը: Պատվիրատուն իրավունք ունի մինչև ապրանքների ամբողջ քանակով մատակարարումը պահանջել նմուշ (օրինակ)՝ տեխնիկական, կառուցվածքային և արտաքին տեսքի համապատասխանությունը գնահատելու նպատակով: Ներկայացված նմուշը ենթակա է հաստատման Պատվիրատուի կողմից, և մատակարարվող ողջ խմբաքանակը պետք է լիովին համապատասխանի հաստատված նմուշին: Մատակարարը պարտավոր է ապահովել արտադրանքի համապատասխանությունը գործող
--	--	--	--	--	--

					նորմատիվ և տեխնիկական պահանջներին և Պատվիրատուի պահանջով ներկայացնել համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր (սերտիֆիկատներ, փորձարկման արձանագրություններ կամ այլ հավաստող փաստաթղթեր):
ПОЛНОЕ ОПИСАНИЕ предлагаемого товара					

ЭКСИ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՄՄԱՌՎ-ԷԱՃԱՊԶԲ-2026/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					